

սարակ իբրեւ զհայր բազմագուրթ իբրեւ զմայր գթած ցուցանէր. զհոգեւոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին, առ մեծամեծս եւ առ մանկունս, առ պատուականս եւ առ անարգս, առ հարուստս եւ առ աղքատս, առ ազատս եւ առ շինականս: 70 Եւ զվերակացութիւնս աշխարհի ամենայն հոգաբարձութեամբ, առանց ամենայն ծուլութեան եւ ամենայն յապաղութեան, տաւեր մինչեւ ի վախճան իւր, եւ ոչ երբեք ուրեք եղել նման նմա այլ ոք ի Զայաստան երկրին:

ԳԼՈՒԽ Ե.

1 Յաղագս Ներսիսի Զայոց կաթողիկոսին, թէ զհարոյ յԱրշակայ արքայէ առաքեցաւ առ Վաղէս կայսրն հանդերձ նախարարաւքն. թէ վասն որոյոյն կայսերն զի՛նչ խաւսեցաւ շատ բանս հաւատոյ, եւ կամ զհա՛րոյ կապեցաւ եւ աքսորեցաւ, եւ զայլ նախարարսն արծակեաց հանդերձ պատարագաւք:

2 Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն, որ էր աշխարհին Զայոց ընդ կայսերն Յունաց, դէպ եղել առաքել անդր կազմութեամբ մեծաւ արքային Զայոց. զի ինքնին մեծ կաթողիկոսն Զայոց Ներսէս, եւ ի մեծամեծացն Զայոց սատրապս տասն ընդ նմա առնել, զի երթիցէ, ի մէջ կայսերն եւ ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան եւ խաղաղութեան նորոգեսցեն: 3 Ապա չոգան գնացին հասին ի կայսերական պաղատն թագաւորացն Յունաց:

4 Չայնու ժամանակաւ թագաւորն մեծ Յունաց Վաղէս ի խոտորութեան հերետիկոսութեան աղանդութեանն արիանոսաց էր ի հաւատս: 5 Արդ իբրեւ ետես զնոսա թագաւորն, զառաջինն մեծապայծառ փառաւք մեծաւ շքով մեծարեաց զնոսա: 6 Ապա դէպ եղել՝ զի որդի միամաւր կայսերն, այն իսկ գտանէր Նորա զաւակ, անգեալ դներ յախտս սաստիկ հիւանդութեան. ապա թագաւորն վասն աղաւթս առնելոյ ի վերայ մանկանն ստիպէր զսուրբ կաթողիկոսն Զայոց զՆերսէս: 7 Իսկ նա ի մէջ մատուցեալ, խաւսել սկսաւ եւ ասէ. Եթէ հաւատացես՝ եթէ Տէր Յիսուս Զրիստոս որդի եւ ծնունդ Աստուծոյ միածին, ինքն յինքնութենէ եւ իսկ յիսկութենէ, յորովայնէ՞¹ Զաւր ծնունդ եւ ոչ արարած, ծագումն Զաւր, լոյս փառաց էականին, եւ նկարագիր Էութեան Նորա. զի այն ծնունդ է եւ որդի ի բնութենէ Նորա. զի որպէս Զայրն՝ նոյնպէս եւ Որդի ի բնութենէ յառաջ քան զամենայն յաւիտեանս ի Զաւրէ ծնեալ, յառաջ քան զլինելն արարածոց՝ ծնունդ, գործակից արարչակից յամենայնի առ Զաւր ի սկզբանէ. զի ամենայն ի Զաւրէ նովաւ եղել յերկինս եւ յերկրի. զի միշտ ընդ Զաւր ի սկզբանէ յառնելն զամենայն արարածս, եւ ի բնէ եւ ի սկզբանէ ընդ նմա ունէր զհամեմատ կերպարանս զիւրոյ ծնողական

1 Թերեւս ի բնութենէ